



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**  
**ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 44 - Ա  
25 դեկտեմբերի 2013 թ.

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 109 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 և ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշումները

**կարգադրում եմ՝**

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝  
Գրիգորյան Ռ. – մարզպետ, հանձնաժողովի նախագահ  
Հովհաննիսյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և քնապահպանության վարչության պետ  
Ստեփանյան Է. – մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ  
Բուդույան Խ.. – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ  
Մելքոնյան Ս. – ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ տնօրեն /համաձայնությամբ/  
Պետրոսյան Ա. – ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

- Ստեփանյան Հ. - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության էներգետիկայի պետական տեսչության Հյուսիսային միջմարզային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ
- Սողոմոնյան Ս. - ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/
- Բարսեղյան Ա. - ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ պետական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/
- Հազեյան Ն. - ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/
- Ղուրջուդյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2001 թվականի սեպտեմբերի 4-ի «Մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» N 109-Ա կարգադրությունը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ